ՆԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ

# 1894-96 ԹԹ. ՋԱՐԴԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ Տ. ՉՅՈԿՅՈՒՐՅԱՆԻ ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ

ԺԹ. դարի վերջին, երբ արեւմտահայությունը հասել էր ցեղային ինքնագիտակցության եւ վերածնվում էր հոգեպես, որ նոր կյանքի ու գեղեցկության սկիզբ էր, բախվեց մեծ արհավիրքի՝ 1894-96 թթ. ջարդերին, որ ցնցեց ոչ միայն հայությանը, այլեւ ողջ մարդկությանը: Խաթարվեց հայ ժողովրդի խաղաղ հոգեաշխարհը. խոշտանգվեցին հազարավոր մարդիկ: Այս իրադարձությունները չէին կարող չթափանցել կյանքի ամենանուրբ զգայաչափի՝ գրականության տիրույթ: Եւ արձագանքները չուշացան: Մի կողմից կոտորած, մյուս կողմից՝ հոգեւորի ստեղծում, արարում. զարմանալիորեն վերելք էր ապրում գրականությունը. «Ստեղծվում էին նոր պարբերականներ, բացվում էին նոր դպրոցներ, լույս էին տեսնում բազմաթիվ գրքեր, աննախադեպ աշխուժացում էր նկատվում գրական կյանքում»[1]: Այս առումով հետաքրքրական է Երուխանի նուրբ ու դիպուկ իմաստավորումը. «Կը քալենք, սակայն, մինչ ահա սա ռոպէիս իսկ մեր երակներուն մէջ մնացած արեան մասնիկները, քաշել հանել կ'ուզեն, մինչ կարծես վախճանական մռայլ ու մահահոտ մշուշը կը պատէ շուրջերնիս, եւ երբ վերջնականապէս սպաննել կ'ուզեն այս ցեղը, **ահա գրականութիւն կ'ընէ ան, գեղարուեստի վրայ կը ճառէ**, իր ազնուացմանն ու բարձրացմանը վրայ կը մտածէ: Գլո՞ւխ կ'ելլուի ասանկ ցեղի մը հետ»[2]:

1894-96 թթ. ջարդերի հետեւանքներն ազդեցին արեւմտահայ գրողների՝ Ա. Արփիարյանի, Լ. Բաշալյանի, Ռ. Զարդարյանի, Երուխանի, Ե. Օտյանի եւ այլոց գեղարվեստական ստեղծագործությունների վրա: «Փոքր եղեռնի» թեման յուրաքանչյուր գրող յուրովի էր տեսնում, ընկալում եւ գեղարվեստորեն արտացոլում այդ ողբերգական ժամանակահատվածի հոգեբանությունը, հայ մարդու անհուն տառապանքը: Ճշմարիտ գրողին բնորոշ «առաջազգաց» հատկությունով նրանք իրենց հոգու ու մտքի տառապանքի գնով օր օրի հարստացնում էին գրականության կենսական տարածքը բարձրարվեստ ստեղծագործություններով, յուրօրինակ կենսափորձով: Նրանք դառնում էին ինքնատիպ հերոսներ, որոնք հաղթահարում էին տիրապետող ժամանակաշրջանը, բարձրանում վեր, դառնում՝ անգութ աշխարհի ու հայ մարդու դաժան բախտի եղերերգակներ: Տ. Չյոկյուրյանը նույնպես... Եւ նրան պետք է գնահատել ոչ թե իր՝ հատորյակ չկազմող գործերով, այլ իր ժողովրդի ներքին ցավը հասկացող, ժամանակի խնդիրները ճշմարիտ, ազնիվ եւ հաճախ չնկատվող նրբությամբ լուծող գեղագետի:

1 **Ս. Սրապիոնյան**, 1894-96 թթ. ջարդերի հոգեբանական հետեւանքների դրսեւորումը Տ. Չյոկյուրյանի արձակում. «Էջմիածին», 2012, թ. Զ., էջ 89:

2 «Գրական ասուլիսներ», Դ., Կ. Պոլիս, 1913, էջ 29:

Տ. Չոկլյուրյանը այս դժվարին ժամանակահատվածում ձգտեց կատարելության հասցնելու իր արվեստը. «Տիգրան Չէօկիւրեան սորվելու եւ սորվեցնելու տենդէն բռնուած էր. Իր նկարագրին էական գիծը կկազմէր այսպէս հանրանուէր գործունէութիւնն ու սէրը»[3]: Ստեղծագործական շատ կարճ կյանքի (շուրջ 7 տարի) ընթացքում նա հայ գրականությունը հարստացրեց նուրբ պոետիկայով ու հոգեբանությամբ հագեցած գեղարվեստական երկերով: Դժբախտաբար նրա ստեղծագործության մեկնությանը քչերն են անդրադարձել (Հ. Մարգարյան, Մ. Հյուսյան, Գր. Հակոբյան, Ս. Սրապիոնյան, Ա. Բեքմեզյան), այն էլ՝ որոշակի խնդիրների արծարծմամբ:

Ծանոթ լինելով համաշխարհային գրականության, գիտության ձեռքբերումներին ու մշակութային անցուդարձին, կատարելով թարգմանչական բուռն գործունեություն, նուրբ վերլուծություններ՝ գրողը տեսնում էր, որ իմացության այս դարում, չնայած մարդը հասել է հոգեւոր զարգացման առավել բարձր մակարդակի ու գիտակցականության, այնուամենայնիվ, դեռ հեռու է մարդ լինելու ճանապարհից: Փոքր եղեռնը դրա վկայությունն էր:

Ինչպես մի խումբ գրողներ (Երուխան, Ռ. Զարդարյան եւ այլք), այնպես եւ զգայուն հոգին՝ Չոկլյուրյանը, ստիպված էր իր բանաստեղծական ոգու քնարին այլ ընթացք տալ. նրա ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ ունեցավ «Փոքր եղեռնի» թեման, որ դրսեւորվեց ինքնատիպ գեղարվեստական-հոգեբանական գյուտերով ու մեկնությամբ:

Չոկլյուրյանը նրբին թափանցումով, յուրահատուկ գեղարվեստով էր մոտենում կոտորած տեսած հայ մարդու հոգեբանությանը, հայտնաբերում նրա՝ իրադրությամբ պայմանավորված ներաշխարհի փոփոխությունը, նոր հոգեվիճակը: Այսպիսով՝ «Տ. Չոկլյուրյանի գեղարվեստական ժառանգության հիմքում ընկած են երկու որոշիչ իրողություններ. կենսաճանաչողությունն ու համաշխարհային գրականության իմացության արդյունքում ձեւավորված գեղագիտական մտածողությունը... Տ. Չոկլյուրյանը այն քչերից է, որոնք կարեւորեցին **այս վերջին** (նոր, ավերակված հոգեկերտվածքների ձեւավորման - Ն. Ս) **իրողությունը**»[4], - դիպուկ նկատում է Ս. Սրապիոնյանը: Հակադրվելով հարգելի գրականագետի տեսակետին, համաձայն որի՝ Չոկլյուրյանի ձիրքը մյուս նորավեպերում (բացառություն՝ «Տերտերին ոճիրը») մեծ ծավալումներ չունի, կարծում եմ նման ծավալումներ առկա են (թեեւ գրականագետը իրավացիորեն նշում է, որ արհավիրքի բերած հոգեբանական ձեւախեղումների հետեւանքները գրողի մնացած նորավեպերում հաճախ ավելի տեւական ու ծանր են, քան ավերն ու սպանդը: Չոկլյուրյանը հաջողել է)[5]:

Գրականագիտության մեջ քիչ է խոսվել Չոկլյուրյանի մասին կամ գրեթե չի խոսվել: «Վանքը», «Հերոսը», «Տերտերին ոճիրը» առանձին քննվել եւ վերլուծվել են՝ տարաբնույթ խնդիրներով, մինչդեռ մնացած երկերը լիարժեքորեն չեն բացահայտ-

3 «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար, թիւ 7, Փարիզ, 1933, էջ 10:

4 **Ս. Սրապիոնյան,** նշվ. աշխ., էջ 91:

5 Տե՛ս անդ, էջ 99:

վել: Այստեղ մեզ հետաքրքրողը դրանց՝ հերոսականության տեսանկյունից քննելն է՝ իբրեւ ջարդերի արձագանք: Այդ արհավիրքի օրերին քչերն էին իրապես հերոսներ, որոնք մնում էին չգնահատված, չարժեւորված: Իսկական հերոսները կյանքին ամենանուրբ թելերով կապված զգայուն անհատներն էին՝ հոգեւորականներ, ուսուցիչներ, արվեստագետներ եւ... հայ կինը:

Պատահական չէ, որ «Լուռ հերոսը» նորավեպը կապված է այդ զգայուններից մեկի՝ վարժապետի հետ. «1895-ի աշունն էր: Հինգ հոգի էին **ամայի** սրճարանին մեջ, գյուղաքաղաքի դասատուն, սրճեփն ու երեք ջոջեր: Սրճարանին դուռները կիսով գոցված էին: Քանի մը օրերե ի վեր **ջարդի** մը վրա կխոսվեր, ու ավանին մեջ հայերը կզգուշանային իրենց տուներեն հեռանալ»[6]: Գրողը նրբորեն բացում է կործանիչ մթնոլորտի թաքուն ու ողբերգական շերտերը: Ժողովուրդը զարհուրած է: Վարժապետը այս «աղաների» մեջ միակն է, որ հասկանում է երկրի ծանր վիճակը: Աղաները եւս ունեն իրենց մեղքի բաժինը ժողովրդի խեղճության մեջ. «...ու կանիծեր մտովի (վարժապետը - Ն. Ս.) հայ ջոջը, որ **ամեն գիտակցություն վիժել տված էր գյուղացիներու հոգվույն մեջ**» (էջ 478)**:** Աղետի պահին «աղաների» հոգեկերտվածքը նույնն է մնում, նրանք չեն փոխվում. նույն անհեռատեսներն են՝ ժողովրդի ցավին անտարբեր: Ամենաողբերգականն այն է, որ ողբերգության մեջ անգամ չեն գիտակցում իրենց դժբախտ վիճակը: Վարժապետը հոգու խորքում թաքուն կարեկցում է նրանց, լուռ թախծում. իրադրությունը խավարեցնում էր նրա լուսավոր հոգին, միտքը. «Ան կրկին անխոս մնաց մթամած» (էջ 478):

Գեղագետին բնորոշ նրբատեսությամբ Չյոկյուրյանը դիմում է բնության երեւույթների խորհրդանշական պատկերման՝ ցույց տալով մոտալուտ աղետը. «**Իրիկունը հեռու չէր**, արեւի լույսը մեղմորեն կտեղար փոշոտ հրապարակին վրա: Պզտիկ ցուրտ հով մը չոր տերեւները կավլեր **հեռվի անկյունները**» (էջ 478):

Այս անհեռատես աղաները սրճարանում նստած հերոսանում են, հրամաններ տալիս եւ անխղճորեն ծաղրում միակ արժանավորին՝ վարժապետին՝ համարելով նրան վախկոտ, «աղջիկ». «Դե՛, վարժապե՛տ, ի՞նչ կխորհիս, ջա՛րդ կա, ջա՛րդ, հայերը կմեռնին: Հոս ալ մեր քյուրտեր կշարժին, **զենք** ունի՞ս, գեթ զմելի մը կամ խարտոց մը» (էջ 477): Ու թեեւ ծաղրում են՝ ներքուստ երկյուղած ու տագնապած են. «զսպված խնդուք մը՝ վախի դողով օծված» (էջ 478): Նրանք անզգույշ էին... արտահայտում էին դատարկ մտքեր, անտեսում դժվար ընթացող կյանքի քաղցր գինը: Մինչդեռ փորձության պահը նոր պիտի գար եւ... չուշացավ. «Ձգե՛, ձգե՛, Սրապ, **վախը** ոսկորներուն է անցեր (վարժապետի - Ն. Ս), մուկ է կտրեր, մահը մահ է, այ մարդ, սանկ մեռնիլ, նանկ մեռնիլ՝ մեկ է, - կրկնեց Գաբիկ աղան ու շարունակեց, - աշխարհքի վրա ո՞վ ունիս, վարժապետ, մեկ գլուխ, մեկ...

Ուժգին պայթյուն մը ծերուկին խոսքը կասեցուց: **Բնազդով** հինգերն ալ վեր ցատկեցին» (էջ 479): Գրողը ցավով նկատում է, որ այս աղաները ազգի համար բախ-

6 **Տ. Կամսարական, Տ. Չյոկյուրյան**, Երկեր, Երեւան, 1984, էջ 477: Այսուհետեւ սույն գրքի մեջբերումները՝ շարադրանքի մեջ փակագծերով:

տորոշ վիճակում անգամ անձնասեր են եւ իրենց վախկոտությամբ, անհեռատեսությամբ նույնքան վտանգավոր ու վնասակար, որքան թշնամին. «**Անզգա** չորս հայերը մնացին իրարու շատ մոտ, գիրկ գրկի, իրարու զգեստ պինդ բռնած, **խեղդամահ եղած ոչխարներու նման տապալված**» (էջ 481): Նրանք վտանգի պահին խեղճանում են, երկյուղում, մինչդեռ ուսուցիչը՝ լուռ հերոսը, ըմբոստանում է, դուրս գալիս լռությունից, ներամփոփ ու հուսահատ հոգեվիճակից, դառնում՝ արդար ձայնող. «Լռեցե՛ք, ...ապա թե ոչ պիտի մեռնինք» (էջ 480):

Նկատելի է, որ գրողի համակրանքը վարժապետի կողմն է, եւ նրա հոգում ցավ կա: Եթե Բարթող աղայի մեջ («Տերտերին ոճիրը») նկատում է նվիրյալ հայ հոգեւորականին, ապա վարժապետ Կարոյի մեջ տեսնում է ազգի ցավով ու ճակատագրով տագնապող անկեղծ հայ ուսուցչին. «**Մարդը թախծոտ էր, անհույս կերեւար:** «Դրոշակի» վերջին թիվերն հայուն ցավը կնկարեին: Ջարդերը կարգավ կկազմակերպվեին նահանգներուն մեջ:

Ու մարդը լուռ կմռայլեր, դալուկ մը կանցներ ճակատեն: Կխորհեր անհույս օրերուն վրա. ի՞նչ պիտի ըլլար խեղճուկ այդ ավանին ճակատագիրը» (էջ 478): Հայ վարժապետի կերպարը այնքանով է նաեւ ուշագրավ, որ, լինելով համեստ ու խոնարհ ուսուցիչ, խորհում էր ազգային ինքնապաշտպանության շուրջ՝ դուրս գալով իր պաշտոնին բնորոշ որոշ բարդույթներից, դառնալով նոր հոգեբանության կրող. «Կորովի բազուկներն ինչո՞ւ պակսեին **ինքնապաշտպանության** համար» (էջ 478): Այդ պատճառով վարժապետ Կարոն թշնամու ավերիչ ձեռքին չի ուզում հեշտությամբ հանձնվել: Նրա անկեղծ հոգու մորմոքը տիրող զարհուրելի պայմաններում արդեն հերոսական է. նա լուռ ցավերի կրողն է: Գրողը այդքան չի բացում վարժապետի հոգու թաքուն ծալքերը, ներքին ըմբոստությունը. դա գալիս է ոչ թե գրողի անկարողությունից, այլ հակառակը՝ մեծ տաղանդից. նա հասկանալի է դարձնում խորհրդավորը. իսկապես խորհող, ցավի ու հիասթափության մեջ այրվող անհատի հոգեվիճակը, առողջ բանականությունը: Վարժապետը կարող էր պաշտպանվել, բայց ինքը միայնակ է արհավիրքի առջեւ, ու չկան մահվանից դեպի կյանք ու լույս տանող օգնության փրկիչ ձեռքերը: Սա է ողբերգականը գրողի համար, որ այնքան նրբորեն ու անտես թախիծով արտացոլվում է նորավեպում:

Երբ գալիս է կանխատեսելին՝ վարժապետի անհետացումը, ապա՝ եղերական վախճանը, ընթերցողի առջեւ բացվում է մի խորհրդավոր իրողություն. վարժապետի լուռ ցավերը մահվանից հետո դեռ շարունակում էին այրել հոգին. «Ամպամած արշալույսի տմույն հեւք մը **դյուցազնին** դեմքը կորոշեր, ու **վերքը կարյուներ** տակավին **լուռ հերոսին կուրծքին վրա**» (էջ 482): Իսկ աղաները՝ ցավին անտարբեր (թեեւ մի պահ նրանց խիղճը շարժվում է), տառապող հոգու վշտին անտեղյակ, տեսնելով վարժապետի մերկ դին, որ «գրկել» էր նրանց ոտքերը (այս պատկերը եւս խորհրդանշական է), ահառած փախչում են հալածական. «Ու չորս **ստվերներ,** առանց հետադարձ ակնարկի, հալածվեցան դեւերու նման» (էջ 482): Գրողը նրանց «ստվեր» է համարում. առանց խղճի ու ցավի մարդը ստվեր է՝ անհոգի: Նրանք այն «չոր տերեւներից» էին,

որ քամին քշում էր «հեռվի անկյունները»: Սրանով Չյոկյուրյանը արտահայտում էր իր բողոքը հայ ունեւորների, դատարկ ուղեղների դեմ, որոնք փոխանակ համախմբվելու եւ փրկության ելք փնտրելու, շարունակում են անտաբեր մնալ՝ սեփական ես-ի մասին մտածելով:

Կյանքն անարդար էր հայի նկատմամբ: Նա իր կամքից անկախ դառնում էր տկար ու անզոր, նրա իրավունքը՝ իրավունք չունենալն էր: Չյոկյուրյանը դառնանում է այս իրողության վրա. հայը կորցնում էր իր ցեղային տոկունությունն ու ուժը: Ժամանակը, ազգի ծանր վիճակը հերոսներ էր պահանջում, ոչ միայն արհավիրքը ֆիզիկապես հաղթահարող, այլեւ ուժեղ հոգով ու բարձր գիտակցականությամբ օժտված հերոսներ: Ժողովուրդը՝ վտանգի մեջ կիսախելագար եւ երազներով վտանգից խույս տվող, կյանքի ու մահվան սահմանում, չէր կարողանում գտնել կյանքի ու ճակատագրի լուսավոր ելքի եզերքը: Մահվան երկյուղի մեջ չէր տեսնում իրենից դուրս եկած հերոսին: Սա է գրողի համար ողբերգականը: Ազգի հետ միասին բռնի մեռնում էր դարերով եկած մի ողջ ժողովրդի հերոսական գիտակցությունը, հոգին, միտքը: Իսկ թերարժեք ազգերի համար ոչնչացնելը նույնպես հերոսություն էր, հոգեկան մեծ ուժ ու բավականություն... աշխարհը տեսնում էր թուրքի ու քրդի հերոսականությունը եւ հայի՝ «տկարի» իրավունքը: Հենց այսպես Չյոկյուրյանը վերնագրեց իր նորավեպը՝ «Տկարին իրավունքը», ցույց տալով իր ժողովրդի միամտության ու հավատի ճակատագրական ու բախտորոշ լինելը:

Նորավեպում պատկերված հայ մարդկանց պարզամիտ ու ներքաշված էութենականության չյոկյուրյանական ընկալումը ակնհայտ է. գրողը մերժում, այպանում է նման հոգեկերտվածքը: Վկան՝ «Լուռ հերոսը» նորավեպը, «Տկարին իրավունք»-ի յուրօրինակ ժխտումն է: Սակայն գրողի մերժումն ու զայրույթը առավելապես ուղղված է թուրքականության դեմ, որում նկատելի են Առանձարի գրականությանը բնորոշ ընդհանրություններ:

Գեղարվեստական ու հոգեբանական գյուտերով առանձնանում է «Տերտերին ոճիրը» նորավեպը: Լուռ հերոս է նաեւ Բարթող աղան: Նրա հոգու արարքը եւս հերոսական է: Բարթող աղան, պահպանելով իր ներքին հավատը, չի դավաճանում նաեւ իր ժողովրդին: Հոգու զոհողության, ապա ոճրի ելքով ուզում է փրկել սեփական ժողովրդին մահվան ճիրաններից. «**Այլասեր էր մարդը**՝ ինչպես վայել է ճշմարիտ հոգեւոր հովվին, ինչպես էր իր գերագույն Տերը՝ Հիսուսը: Բայց գիտակցության մեջ՝ ոչ նրա չափ անմեղ եւ իր պարտքի մեջ միշտ հուդայականություն գտավ իր տիրոջ հանդեպ: Եւ ինչպես մարդիկ իրենց Տիրոջ մարդեղեն կերպարանքի մեջ չկարողացան տեսնել նրա աստվածայնությունը, այնպես էլ **տեր Բարթողի մեջ նրա հոտը չտեսավ նվիրյալին ու տառապյալին, չտեսան քահանային, այլ՝ չքահանային**»[7]:

Գրողը խորաթափանց հայացքով տեսնում է մյուս անկեղծ նվիրյալին՝ հայ կնոջը, որ ցեղային հերոսական հատկությունների կրողն ու պահպանողն է: Այս առումով առանձնանում է «Հարսին վրեժը» նորավեպը:

7 **Ս. Սրապիոնյան**, նշվ. աշխ., էջ 95-99:

Ճակատագիրը դառնացրել էր Գոհարին. երկար տարիներ զրկել է ամուսնուն տեսնելու բերկրանքից: Այդքան տառապանքների մեջ՝ վերջապես երջանկության մի պահ. հանկարծ իմանում է, որ Պետոն՝ ամուսինը, շուտով վերադառնալու է Պոլսից: Սկսվում է հոգու նիրհած խռովքի խանդավառումը. «Տեսակ մը գինովություն եկած էր վրան, երազներով, հիշատակներով միտքը կխճողեր ու ապրած տասը տարվան այրիի դժնե կյանքն անհետացած, մեռած կերեւար իրեն համար» (էջ 456-457): Գրողը նրբորեն բացում է Գոհարի ողբերգական հոգեաշխարհը՝ դիմելով բնապատկերի սիմվոլիկ խորհրդին. «Հովը **փեղկված** պատուհան **մը կծեծեր, ու հյուղը կսարսեր:** Երբեմն փուխերիկեն ներս կվազեր զվարթ**, անհասկանալի աղաղակներ** ձգելով ու **ծուխի հոսանք** մը տարածելով սենյակին մեջ՝ **կհեռանար**» (էջ 457): Հուզախռով սպասումներից հետո հանկարծ դուռը բախում է քուրդ Հասոն: Նախազգացումը ալեկոծում է բոլորի հոգին: Հասոն սպանել էր Պետոյին: Գրողը շեշտում է հատկապես Հասոյի՝ հայերին վիրավորելու կերպը. «Հայերն **աղջիկ են, աղջիկ,** մեկը կծկեց, ու մյուսը **տավարի պես** մեռավ պոռալով» (էջ 459): Հասոն խեղճության վրա ձեռք բարձրացնող «հերոս» է: Սա բնական է, բայց ոչ ճշմարիտ: Այս անարդարությունը, անբարոյականությունը չի կարող հանդուրժել ճշմարիտ բնությանը մոտ զգայուն կինը՝ Գոհարը: Նա ոչ միայն իր տան, այլեւ առհասարակ հայ կնոջ վրիժառու տեսակն է, իր ցեղի ժառանգորդը: Այդ իսկ պատճառով լուծում է իր արյան վրեժը՝ դաշունահարելով քուրդ Հասոյին.

«- Ա՜հ, կյավուր կին, զիս սպանել կուզես:

- Այո՛, շա՛ն ծնունդ, դուն իմ **արյունս** խմեցիր, Պետոս, ա՜խ... գոչեց **մոլեգին** հարսը ու հարվածն երկրորդեց» (էջ 461): Նրա հերոսականության մեջ արդարացում կա, իսկ ոճրի մեջ՝ ողբերգություն: Պարզ չի դառնում՝ ինչ արձագանք է տալիս ամբոխը այս ոճրագործությանը (ինչպես «Տերտերին ոճիրում»): Միայն հովն է կարեկցում դժբախտ ընտանիքին. «Հովն ամեհի, անհուն եղերերգ մը կարձակեր սարսվող հյուղին շուրջ» (էջ 462):

Որքան էլ տարօրինակ թվա՝ կոտորածը, այնուամենայնիվ, բերում էր իր հետ կյանքի նորովի վերահմաստավորում, ճանաչողություն, զգոնություն: Ի վերջո, այն մարդու փորձությունն է, եւ հաղթահարվում է ոչ միայն ազգովին, այլեւ յուրովի՝ անկուն կամքի ու լույս երազների շնորհիվ: Ընդհանրական դառնալու դեպքում կդառնա մեծ ուժ, մեր ուժը՝ ներկայի ու գալիքի աղետների դեմ: «Մեր ուժը» Չյոկյուրյանի լավագույն գործերից է եւ կարծես ամփոփում է գրողի լավատեսությունը, կենսափիլիսոփայությունը՝ ցուց տալով ժողովրդի հարատեւության հերոսականության գաղտնիքը, փիլիսոփայությունը. «**Բայց բան մը կար՝ ապրեցնել փոքրերը**» (էջ 490): Շուշանը դառնում է ոչ միայն հայ կնոջ, այլեւ մի ամբողջ ժողովրդի հավաքական կերպար, նրա «անգիտակից իտեալի» հիշատակները կրողն ու պահպանողը. «Հաղթանակը պետք է պայքարեն վերջ ամփոփվի ու տեսնա հաղթության մեծությունը: Շուշանի, հեգ Կյուրեղենց Շուշանին համար պահը ավելի նպաստավոր էր արթնցնելու, քրքրելու, զգելու հին կնճիռներուն, անհամար հուզումներուն, գերագույն ճիգերուն,

**հերոսական կամքի**, հավատքի եւ ցեղային **անգիտակից իտեալի հիշատակները**» (էջ 489): Սա յուրօրինակ հայտնատեսություն է, ամենազորեղն ու ամենատեւականը, դիմացկունը, իր էության մեջ աստվածային, որն ամեն անգամ ցնցվում է աղետի, ավերումի տագնապից: Շուշանը, որքան երազներով տարված, չի կարող անմասն մնալ իրականության ազդակներից, եւ սա բնական է: Դեպքերն անընդհատ հարվածում են զգայուն սիրտը, գիտակից միտքը: Ջարդերի իրական տեսիլները հաջորդում են մտապատկերում եւ սարսռեցնում հոգի. մի՞թե սա այն «կարմիր ծիծաղը» չէր, որ տիրել եւ ավերում էր խաղաղատենչ ու ազատասեր հոգուն. «Աշխարհ ճանաչած էր դեպքեն վերջ, եւ ինչ դեպք, ինչ ավերող շրջան: ...Շուշան կրկին կապրեր դեպքը, եւ անոր երեւակայությունը կկազմեր պատկերներուն ամենեն վայրագը» (էջ 489): Ո՞վ է տվել մարդուն մահ տալու իշխանությունը. «Մեռիր, կյավուր, այս է հայուն արժանի վախճանը» (էջ 490): Հենց այստեղ է Շուշանը հերոսանում. այդ մահվանը հակադրվում է հավիտենական մարդկային պատգամով՝ ուղղված մանուկ մարդուն. «Զորանա՞ս, մեծ մարդ ըլլաս» (էջ 490): Մի մեծ ու զորավոր հավատք գալիս է մշուշելու աղետը: Հավատքին զուգահեռ, ավելի ճիշտ՝ նրա մեջ, տառապանքն է տարիք առնում. «Շուշան անհատնում, սառ, անշշուկ գիշերներու հետ միայնակ՝ փոքրիկ, մրափող ճրագին առաջ կիյուսեր, կիյուսեր մեռած հոգիով, արցունք կուլ տալով, **սոսկումեն հերոս կտրած**, միշտ աղոթելով, կաշխատեր հեռացնել քարի նման աչքերուն վրա ճնշող քունը՝ վիրավորելու աստիճան խածնելով փայտացած մատները: Այրին կտեսներ հիմա, որ գուլպաներուն հետ **իր կյանքն ալ գործված էր**» (էջ 491): Սա ամուսնուց որբ մնացած, երազներից որբացած կնոջ հոգեկերտվածք է: Հոգին խաղաղվում է, երբ ամուսնու համար հոգու հաց է տալիս նույնպես որբացած մի ընտանիքի. «Ախ, էրկանս ճալլաթն էր, - մրմնջեց... Ու զույգ մը արցունք դեղնած այտերեն կսահեր վար՝ անհուն ժպիտ մը անցավ դիմագծերեն...» (էջ 492):

Այսպիսով, Տ. Չյոկյուրյանի նովելներում հերոսականությունը հանդես է գալիս տարբեր դրսեւորումներով եւ բազմակերպ է: Այստեղ չկան ֆիզիկական առումով իրական հերոսներ, ասենք՝ հայդուկներ, բայց կան խորհող ու զգայուն անհատներ, որոնց կյանքն ու արարքը նույնպես ողբերգական է ու հերոսական՝ պայմանավորված անողոք ժամանակաշրջանով:

Չյոկյուրյանի պատկերած իրականությունն ու մարդը, հերոսականությունն ու ողբերգականությունը, որքան էլ մոտ ու ընդհանուր Ռ. Զարդարյանի, Առանձարի կամ այլոց գրական աշխարհին, էապես տարբեր, այլ է՝ հոգեբանական գյուտերով ու դիտարկումներով շահեկանորեն տարբեր: